ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.08.2013թ.
206-ի 9

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի նախագահ
պարոն Արտակ Շաբոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շաբոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակիցները 2011 եւ 2012թ.թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Խնդրում ենք պարգեւատրումների մասին տեղեկությունները տրամադրել ըստ հաստիքների՝ ոչ անվանական՝ աշխատողների անձնական տվյալները պաշտպանելու նկատառումով:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան